ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2020թ. օգոստոսի 6 -ին, N 240
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՎԱՐԴԵՆԻՍԻ Զ. ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՎԵՏԻՔ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի 69-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2020 թվականի հուլիսի 7-ի N 95 որոշումը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության 2020 թվականի օգոստոսի 5-ի N49-1898-20 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Վարդենիսի Զ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ավետիք Հարությունի Ավետիսյանի պաշտոնավարությունը ժամանակավոր դադարեցնել 2020 թվականի օգոստոսի 13-ից՝ տնօրենի ամենամյա արձակուրդի ավարտի հաջորդ օրվանից:
2. Տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավոր դնել <<Վարդենիսի Զ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական գծով փոխտնօրեն Ռուզաննա Ռուբենի Մակարյանի վրա:
3. Որոշման մեկ օրինակը տրամադրել Ավետիք Ավետիսյանին՝ կատարումը դնելով անձնակազմի կառավարման բաժնի վրա:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ